

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի ամբողջական փաթեթի բաղկացուցիչ մաս:

Ի լրումն ԵԱՏՄ-Սինգապուր ազատ առևտրի համաձայնագրին, որով ազատականացվում է ապրանքների առևտուրը, Համաձայնագիրը, ըստ էության, ազատականացնում է Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների իրականացման գործընթացները:

Սահմանելով երկու կողմերի համար տնտեսական գործունեության ընդհանուր սկզբունքներ՝ Համաձայնագիրը նախատեսում է ծառայությունների առևտրի և ներդրումների ոլորտում խոչընդոտների վերացում, տնտեսական արդյունավետության բարձրացում և բարենպաստ պայմանների ստեղծում՝ ընդլայնելով տնտեսական համագործակցությունը և փոխշահավետ օգուտները, ինչպես նաև նպաստելով երկկողմ տնտեսական հարաբերությունների ակտիվացմանը և երկուստեք նոր շուկաների բացահայտմանը: Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության կարգավորումներով Համաձայնագիրը միաժամանակ կխթանի նաև գործարար նախաձեռնությունները:

Համաձայնագիրը ներառում է ներդրումների, վեճերի կարգավորման, թափանցիկության մասին գլոբալներ, ինչպես նաև առանձին գլոբալ ծառայությունների առևտրի մասին և համապատասխան հավելվածներ, որոնք ներառում են այն ոլորտները, որտեղ, համաձայն ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ կողմից կնքված միջազգային պայմանագրերի, առկա են որոշակի առանձնահատուկ դրույթներ օտարերկրացիների, մասնավորապես՝ սինգապուրցիների համար: Ընդ որում՝ նախատեսված է նաև առանձին հավելված հետազայում հնարավոր կիրառելի սահմանափակող միջոցների վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ այսպիսի մոտեցումը նմանատիպ համաձայնագրերում սկսել է կիրառվել վերջին տարիներին և համահունչ է միջազգային լավագույն փորձին:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի վավերացումը Հայաստանի Հանրապետության կողմից:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

12/9/2019

X 

ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ

Signed by: SIMONYAN VAROS 1503810070

ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ

